հետևից հեծյալներ ուղարկեցին, որոնք նրան հասան Նիկոմիդա քաղաքում[131], որ այժմ կոչվում է Իզնիմուտ (Իզմիթ) և սպանին նրան ու այնտեղ թաղեցին: Նրա վրա գմբեթ շինեցին: Իսկ նրանք, որ նրա հետ եկել էին, պատմեցին շահին, թե Ռոստոմ խանի հրամանով սպանին Թահմազին: Շահը բարկացավ, ուղարկեց մասմաս հոշոտեցին նրան և գցեցին շներին և այդպես կորավ. ինչ չափով որ չափեց, նույն չափով չափվեց. այն, ինչ նա արեց ընկերոջը, անձամբ փոխարենը ստացավ:

ԳԼՈՒԽ ԻԷ
ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հազար հարյուր երեք (1654) թվի օգոստոսի երկուսի չորեքշաբթի Աստվածածնի բարեկենդանին ես պարսից մայրաքաղաք Թավրիզում էի: Օրվա 7-րդ ժամին արեգակը խավարեց, և ցերեկը եղավ որպես ամպով ծածկված գիշեր, խավարը բռնեց աշխահը, աստղերը ճառագայթելով այլակերպ էին երևում: Բոլոր արհեստավորները, վաճառականները փակեցին իրենց խանութների, կրպակների դռները, քանզի նույն ժամին գողերը շատացան: Իսկ թռչունները, որ գտնվում էին քաղաքում, սասանվեցին, ահ ու երկյուղը բռնեց ամեն մարդու: Այդպես խավար մնաց կես ժամի չափ, ապա լույսը ծագեց: Իսկ քաղաքի Բեջանբեկ անունով իշխանը հավաքեց պարսից բոլոր գիտուններին, որ քննեն, թե ինչն էր արեգակի խավարման պատճառը: Ոմանք ասացին, թե մահ է առաջանալու, իսկ ուրիշներն այսպես, այնպես: Իշխանը նրանց ասածներին չհավատաց, այլ մարդ ուղարկեց հայոց եկեղեցին, որպեսզի նրա քահանաները քննեն: Այնտեղ էր գտնվում Զաքարիա անունով մի վարդապետ Աստապատ գյուղից. մենք էլ նրա հետ էինք: Քննեցինք տոմարագիտությամբ և գտանք, որ Լուսինը երեսուն օր չի կատարում իր ընթացքը, այլ քսանիննուկես օր, իսկ այն մնացած կես օրը լուսինը նորում է, և այդ է, որ երբ հայոց տոմարով կիսակ են անում, 29 ու կեսը հանում են երեսունից մնում է կեսը և այս կես օրը ամսի կիսակն է: Նույն այս խավարման մեջ լուսինը իր քսանիննն օրվա ընթացքը արել էր, իսկ 29 օրվա կեսում լուսինը նորում է այդ գոտիում, որ էր արեգակը միևնույն գոտում: Արեգակի տակ լուսինը նորեց և կանգնեց արեգակի դիմաց և խավարեցրեց այն: Եվ որ մնաց խավար կես ժամ, այն կեսը երեսունից պակասն էր, իսկ նոր լուսնի սկիզբը, ինչպես արեգակի մտնելու ժամանակ ցերեկին ավարտ է լինում, իսկ գիշերին՝ սկիզբ: Այդպես էլ այդ կես ժամին, երբ լուսինը նորում է, ոչ լրիվ երեսուն է, ոչ էլ քսանիննը, այլ կես ժամ: Այս կես ժամերը և կես օրերը հավաքվում են, կազմում են երկու, երեք տարին տասներեք լուսին են անում: Այս խավարումը պատահեց տասներեքերորդ լուսնին՝ լուսնի նորումի սկզբում: Այս մենք պատմեցինք իշխանի ծառաներին (և ասացինք), որ արեգակի խավարումից վնաս չկա, քանզի լուսինը տակը լինելով խավարեցրեց այն: Նրանք գնացին իշխանին պատմեցին, ինչ որ մեզանից լսեցին: Նա հանգստանալով մեզ ճշմարտեց, իրենց մոլլաներին սուտ հանեց, իսկ մեզ ուղարկեց շատ միրգ ու չամիչ:

ԳԼՈՒԽ ԻԸ
ՄԱՀՄԱԴ ԽԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՉԱՐ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Այս Մահմադուլի խանը Լալա բեկ կոչված մեծ իշխանի որդին էր: Լալաբեկը ավագ էր մեծ ու առաջին Շահ Աբասի առջև, իսկ փոքր Շահ Աբասը խանություն տվեց նրա որդի Մահմադին և ուղարկեց Երևան այնտեղ իշխելու: Սա եկավ մեծ ուժով ու փառքով և մուտք գործեց մեր երկիրը՝ խրոխտանալով ու հպարտությամբ, քանզի գոռոզ ու ինքնահավան ու ագահ էր: Այս պատճառով քայքայեց բոլոր ուղիղ բաները, որը դրել էր Խոսրով խանը: Ծանրացրեց հարկերը, ճանապարհների համար մաքս հաստատեց, և ինչ վաճառվում էր, թանկ էր՝ թե ցորեն, թե այլ ինչ:

Նաև ամեն տարի քննիչներ էր ուղարկում արտերը գրանցելու, իսկ հինգորդը (եկամուտի հինգից մեկը) տարեցտարի ավելացնում էին: Նույնպես էլ խաշների թիվը, այգիների չափը և գլխագները (ավելացնում էին): Հարկի տակ դրեց ամեն ինչ: Ինչ որ Խոսրովը թեթևացրել էր, սա ծանրացրեց ու թանկացրեց: Դարձավ մեր ազգի հակառակորդ ու թշնամի: Գնաց Սուրբ Էջմիածին զվարճանալու պատրվակով, տեսավ նրա վայելչությունն ու փառքը, նախանձեց: